ՀՈՒՆՎԱՐ/ՓԵՏՐՎԱՐ#23

ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԼԳԲՏԻ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՏՆԱՀԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ
էջ 01

«ԱՌՈՂՋ ԲԱՆԱՎԵՃԻ ԽՐԱԽՈՒՍՈՒՄԸ ՆՊԱՍՏԵՑ ՍԵՄԻՆԱՐԻ ԷՖԵԿՏԻՎՈՒԹՅԱՆԸ»
էջ 02

«ՓՈՐՁՈՒՄ ԵՆՔ ԽՐԱԽՈՒՍԵԼ ԲԱՐԵԽԻՂՃ ԵՒ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻՆ»
էջ 03

ՄԻԱՎ-Ը ԵՎ ԼԳԲՏԻՔ ԱԿՏԻՎԻԶՄԸ ԹԵՄԱՅՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ
էջ 04

ԴԱՍԸՆԹԱՑ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ
էջ 04

ՔՆՆԱՐԿՈՒՄ ՄԻԱՎ-ԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹԵՄԱՅՈՎ
էջ 05-06

ԳԼՈԲԱԼ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՊՈՐՏՖՈԼԻՈ ՄԵՆԵՋԵՐ ՎԱԼԵՐԻԱ ԳՐԻՇԵՉԿԻՆԱ
էջ 06

«ՔՀԿ-ՆԵՐԸ ԱՌԱՋՆԱԳԾՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՎԱՍԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ» ԵՌՕՐՅԱ ԴԱՍԸՆԹԱՑ
էջ 07

ՏՍՏ-ՆԵՐԻ ԵՒ ՏՐԱՆՍ* ԱՆՁԱՆՑ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ
էջ 07

ՀԱՂԹԱՀԱՐԵՆՔ ՄԻԱՎ-Ի ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱԽԵՐԸ ՄԻԱՍԻՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԱՆԴԻՊՈՒՄ
էջ 08-09

ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ԸՆԹՐԻՔԸ «ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ-Ի ԳՐԱՍԵՆՅԱԿՈՒՄ
էջ 09-10

ԼԳԲՏԻ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՏՐԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ՝ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ, ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՈՏՆԱՀԱՐՄԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

© Copyright - ngngo "New Generation" Humanitarian NGO 2017

Հայաստան 0019, ք.Երևան,Թումանյան 41, բն. 4
+374 60 378989 +374 60 478989
newgenerationngngo@gmail.com http://ngngo.net/

ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ խտրական վերաբերմունքի՝ ատելության խոսքի, գենդերային կարծրատիպերի և մարդու իրավունքների ոտնահարման դրսևորումները ՀՀ-ում հետազոտությունն իրականացվել է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից Նորվեգիայի Հելսինկյան Կոմիտեի ֆինանսական աջակցությամբ:Հայաստանում անհանդուրժողականությունը, խտրական վերաբերմունքը, ատելության խոսքի դրսևորումները և իրավունքի ոտնահարումը ԼԳԲՏԻ համայնքի նկատմամբ շարունակում են խնդիր մնալ: Անհանդուրժողականությունը փակ շղթայի պես պտտվում է հանրության տարբեր օղակներով՝ հեռուստաթերներից մինչ ընտանիք, ընտանիքից մինչ ուժային կառույցներ, քաղաքական, քաղաքացիական, սոցիալական նախաձեռնություններից մինչ միջանձնային հարաբերություններ: Այն տարբեր հանրային գործընթացներին զուգահեռ հասարակության տարբեր օղակներում ունենում է իր բուռն դրսևորումները: ԼԳԲՏԻ համայնքի հիմնախնդիրների մասին տեղեկատվության պակասը, ոչ կոմպետենտ անձանց սիրողական տեսակետների հանրայնացումը ԶԼՄ-ների կողմից, անձի սեռական կողմնորոշման փաստի շահարկումը քաղաքացիական և քաղաքական գործընթացներում ձևավորելով գենդերային կարծատիպեր՝ նպաստում են ԼԲԳՏԻ անձանց նկատմամբ իրականությունից զուրկ պատկերացումների ստեղծմանն ու դրանց հանրայնացմանը: Այս ամենը մարդուն ներանձնային հոգեբանական բարդույթներից տանում-հասցնում են մինչ մարդու իրավունքի խախտումների, արժանապատվության ոտնահարման, սեռական բռնության և այլ իրավախախտումներով լի հակաժողովրդավարական մի ճանապարհի, որով հնարավոր չէ մոտենալ և առավել ևս հասնել իրավահավասար, ժողովրդավար պետություն ստեղծելու տեսլականին, ինչի շնորհիվ միայն Հայաստանի Հարապետությունը կդառնա քաղաքակիրթ աշխարհի բաղկացուցիչ մաս:

Յուրաքանչյուր երկրում ԼԳԲՏԻ համայնքը տվյալ երկրի հասարակության անքակտելի մասն է՝ տվյալ հանրությանը բնորոշ դրսևորումներով, կարծատիպերով և սովորույթներով: ԼԳԲՏԻ անձիք անհանգստանում են նույն սոցիալ-քաղաքական հարցերով, մշակութային կամ սպորտային, կրոնական, իրավական, ռազմական և ամենատարբեր ոլորտներում առկա հիմնախնդիրներով, ինչ հասարակության մյուս անդամները: Որքան անհանդուրժող է հասարակությունը, նույնքան էլ անհանդուրժող կարող են լինել հենց ԼԲԳՏ համայնքի ներկայացուցիչները՝ իրենք իրենց նկատմամբ: Ուստի հանրային հանդուրժողականությունը խիստ կարևոր նշանակություն ունի առողջ հոգեկերտվածքով անձի և քաղաքացու ձևավորման գործընթացի վրա: Իսկ նման քաղաքացիների քանակական առկայությունը կարող է բերել հանրային որակական փոփոխության՝ ձևավորելով հանդուրժող, մարդու իրավունքը գնահատող, կրթված, խտրական վերաբերմունք ու բռնություն չհանդուրժող, ժողովրդավար հասարակություն:

Մինչդեռ Հայաստանում ԼԲԳՏԻ համայնքի նկատմամբ անհանդուրժողականությունը, հանրային տարբեր օղակներում պտտվելով, արտահայտվում է մարդու իրավունքների խախտումներով, խտրական վերաբերմունքով և այլ բազմասեկտոր դրսևորումներով:

THE NORWEGIAN HELSINKI COMMITTEE

ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ խտրական վերաբերմունքի՝ ատելության խոսքի, գենդերային կարծրատիպերի և մարդու իրավունքների ոտնահարման դրսևորումները ՀՀ-ում հետազոտությունն իրականացվել է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից Նորվեգիայի Հելսինկյան Կոմիտեի ֆինանսական աջակցությամբ:

«Առողջ բանավեճի խրախուսումը նպաստեց սեմինարի էֆեկտիվությանը»

Հունվարի 13-15-ը «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն սեմինար էր կազմակերպել մարզերի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների համար «Կարողությունների զարգացում հանուն մարդու իրավունքների պաշտպանության և խտրականության կանխարգելման» թեմայով: «Դասընթացը շատ լավ էր կազմակերպված: Ես նոր գիտելիքներ ստացա, ինձ համար հատկապես նոր էր «Անվտանգ տարածքներ» թեման: Մասնակիցները ևս ճիշտ էին ընտրված, մեր մեջ փորձի փոխանակում ևս եղավ»,- իր տպավորություններով է կիսվում դասընթացի մասնակից, Եղեգնաձորի Քաղաքացիական Երիտասարդական Կենտրոնի ծրագրերի համակարգող Լիլիթ Խաչատրյանը:

Դասընթացին ներկայացվել են հետևյալ թեմաները.

- Մարդու իրավունքներ. հիմնական հասկացություններ, սահմանումներ, պաշտպանության մեխանիզմներ
- Խտրականություն, տեսակները և խտրականության արգելքով պաշտպանված հիմքերը, կանխարգելման միջոցները
- Մարդու իրավունքների խախտումների և խտրականության դեպքերի փաստաթղթավորում
- Աշխատավայրերը առավել ներառական դարձնելու գործողությունների պլանի մշակում:

«Սեմինարների ամենադրական կողմը ճիշտ ընտրված հաջորդականությունն էր, որով մատուցվում էր տեղեկատվությունը՝ մարդու իրավունքներ, խտրականություն, անվտանգ տարածքներ, ինչի շնորհիվ ունկնդիրները բավականին լավ ընկալեցին նյութը:

Պրակտիկ աշխատանքները, գործողությունների ազատությունը, որ տրվում էր դրանք կատարելիս, առողջ բանավեճի խրախուսումը նույնպես նպաստեցին սեմինարների էֆեկտիվությանը: Ընդհանուր, նամանավանդ դատելով ամեն դասախոսությանը բացականեր գրեթե չլինելուց, սեմինարը շատ լավ անցավ»,- կարծում է Արտաշատի Քաղաքացիական Երիտասարդական կենտրոնի ներկայացուցիչ Բայանդուր Պողոսյանը:

Դասընթացը կազմակերպել էր «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն «Խտրականության դեմ պայքարի և հանուն հավասարության» կոալիցիայի կողմից իրականացվող «Առավել շատ տեղեկատվություն, առավել քիչ խտրականություն. ՔՀԿ-ների և խոցելի խմբերի կարողությունների զարգացում և հզորացում» ծրագրի շրջանակում, որը ֆինանսավորվում է Բաց Հասարակության Հիմնադրամներ – Հայաստան կազմակերպության կողմից և նպատակ ունի հզորացնել ՔՀԿ-ների՝ խտրականության կանխարգելմանն ու ապահով տարածքների ստեղծմանն ուղղված կարողությունները:

«Փորձում ենք խրախուսել բարեխիղճ և պրոֆեսիոնալ լրագրողներին»

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի Մարդու իրավունքների և շահերի պաշտպանության ծրագրերի համակարգող Նարե Հովհաննիսյանը և լրագրող-հետազոտող Նանե Բագրատունին Մեդիա կենտրոնում ներկայացրել են կազմակերպության կատարած երկու հետազոտությունները՝ «Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց իրավունքների ոտնահարման վերաբերյալ» սոցիոլոգիական հետազոտությունը և «2016թ.-ին ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ էլեկտրոնային մամուլում խտրականության, ատելության խոսքի և բռնության կոչերի վերաբերյալ» զեկույցը: Նանե Բագրատունիի խոսքով՝ ԼԳԲՏԻ (լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանս, ինտերսեքս) անձինք ամենաշատ խտրական վերաբերմունքի և բռնության են ենթարկվում իրենց ընտանիքներում և ուժային կառույցներում՝ ոստիկանությունում, կալանավայրերում, բանակում: Հետազոտությունն անցկացվել է Հայաստանի 10 մարզերում ու Երևանում, խորքային հարցազրույցներ են անցկացվել թվով 111 անձանց հետ: Նրանց մեծամասնությունը ԼԳԲՏԻ համայնքի ներկայացուցիչներ են: Վերջիններս նշել են, որ իրենց նկատմամբ ուժային կառույցներում դրսևորվել է խտրականություն՝ ուղեկցված հոգեբանական և ֆիզիկական բռնություններով: ԼԳԲՏԻ անձինք խտրականության են ենթարկվում նաև առողջապահական և կրոնական կառույցների կողմից: Նանե Բագրատունին իր խոսքում ընդգծեց, որ ԼԲԳՏԻ համայնքը մեր հասարակության անքակտելի մասն է կազմում և իրենց էլ է հատուկ բոլոր այն կարծրատիպերը, որոնք առկա են հայաստանյան հասարակությունում: «ԼԳԲՏԻ համայնքի ներսում ևս կա խտրականություն: Օրինակ, նույնասեռականները ունեն տրանսֆոբիա, նրանք չեն ընդունում տրանսսեքսուալ անձանց»,- նշեց Նանե Բագրատունին: Նանե Բագրատունին և Նարե Հովհաննիսյանը նշեցին, որ ԶԼՄ-ները ևս նպաստում են ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության տարածմանը: «Մեր իրավաբաններն ուսումնասիրել են 30 հրապարակում, որից 10-ի մեջ կան ակնհայտ բռնության կոչեր, ատելության քարոզ՝ հենց վերնագրերում»:

Նարե Հովհաննիսյանը նաև ընդգծեց, որ լրագրողները հաճախ իրենց չիմացության պատճառով են վիրավորական արտահայտություններ գործածում: «Պատահում է, որ նյութը չեզոք է գրված, վիրավորելու նպատակ չունի, սակայն սխալ տերմինների գործածությունը ևս վիրավորական է համայնքի ներկայացուցիչների համար»: Նարե Հովհաննիսյանը նշեց, որ ԶԼՄ-ներում ԼԲԳՏԻ անձանց վերաբերյալ տեղեկատվության որակի բարձրացմանը նպաստելու նպատակով «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն արդեն երկրորդ տարին անցկացնում է «Բազմազանություն» լրագրողական մրցանակաբաշխություն: «Անցած տարի մեզ ուղարկել են թվով 10 լրագրողական նյութեր, այսինքն՝ որակյալ նյութերի քանակը դեռ այդքան էլ շատ չէ: Մենք փորձում ենք խրախուսել լրագրողներին, որպեսզի նրանք բարեխղճորեն և պրոֆեսիոնալ մոտենան իրենց աշխատանքին»,- հայտարարեց Մարդու իրավունքների և շահերի պաշտպանության ծրագրերի համակարգողը:

«Բազմազանություն 2016» մրցանակաբաշխությունը տեղի կունենա 2017 թ.-ի ապրիլի 6-ին:

ՄԻԱՎ-ը և ԼԳԲՏԻՔ ակտիվիզմը թեմայով աշխատանքային հանդիպում Բրյուսելում

2017թ.-ի փետրվարի 8-ից 10-ը «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ աշխատակից Արման Սահակյանը մասնակցեց ILGA-Europe կազմակերպության կողմից Բրյուսելում կազմակերպված «Կարողությունների զարգացում. ԼԳԲՏԻՔ հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունների դերը ՄԻԱՎ-ի և այլ սեռավարակների կանխարգելման ոլորտում» աշխատանքային հանդիպմանը:

- Թիրախային խմբերի հասկացությունը և սահմանումները
- ՄԻԱՎ-ը, դրա կանխարգելումը, փոխանցման ուղիները և բուժումը (նոր մոտեցումներ)
- Այլ սեռավարակներ
- ԼԳԲՏԻՔ համայնքը և ՄԻԱՎ-ի ոլորտում առկա ակտիվիզմը
- ՄԻԱՎ-ի ոլորտում ԼԳԲՏԻՔ ակտիվիզմի պատնեշները և դրանց հաղթահարման դիները
- Շահերի պաշտպանությունը երկրներում PreP-ի խթանման համար:

Հանդիպման ամենակարևոր հատվածն էր PreP-ի՝ որպես ՄԻԱՎ-ի կանխարգելման նոր մոտեցման քննարկումը աշխարհում և այդ ուղղությամբ շահերի պաշտպանության ռազմավարության ուրվագծումը: Հանդիպման ավարտին մասնակիցները մշակեցին համագործակցության նախագծերի իրականացման պլան առաջիկա 2-3 տարիների ընթացքում:

Դասընթաց քաղաքապետարանների ներկայացուցիչների համար Գյումրիում

2017 թ.-ի փետրվարի 8-10-ը Երևանի և ՀՀ մարզերի քաղաքապետարանների ներկայացուցիչները Գյումրիում մասնակցել են «Խտրականության արգելք՝ հանուն ժողովրդավար հասարակության» թեմայով դասընթացի, որը կազմակերպել էր «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն: Դասընթացի նպատակն էր բարձրացնել քաղաքապետարանների ներկայացուցիչների զգայունությունը ԼԳԲՏԻ խնդիրների նկատմամբ՝ ԼԳԲՏԻ անձանց մարդու իրավունքների խախտումների և պաշտպանության մեխանիզմների, նրանց նկատմամբ կիրառվող խտրականության և խոշտանգումների, ատելության խոսքի դրսևորումների կանխարգելման մասին: Երեք օրերի ընթացքում քննարկվել են վերոնշյալ թեմաներին վերաբերող ուշագրավ հարցեր, որոնց դասընթացավարներ Արտակ Զեյնալյանը և Արա Ղազարյանը տվել են համապարփակ պարզաբանումներ: Առանձնակի ուշադրություն են դարձրել հատկապես այն հարցերին, թե որոնք են մարդու իրավունքների խախտումները և ինչ մեխանիզմներ են անհրաժեշտ ԼԳԲՏԻ անձանց մարդու իրավունքները պաշտպանելու համար, ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ խտրականությունն և ատելության խոսքը որ ոլորտներում է դրսևորվում, քննարկվել են ատելության խոսքի և խոսքի ազատության, զրպարտության և վիրավորանքի տարբերակումը, ինչպես նաև վերջիններիս կանխարգելման միջոցների ստեղծման և կիրառման միջոցները:

Դասընթացն իրականացվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության /USAID/ ֆինանսական աջակցությամբ իրականացվող «ԼԳԲՏԻ անձանց մարդու իրավունքների խթանում հայաստանյան հասարակությունում» ծրագրի շրջանակներում:

Հատուկ բեմականացումներ, դերախաղեր, «Իրավունքների երկրի» հատակագծում, ակտիվ քննարկում. այս ամենը տեղի էր ունենում Գյումրիում՝ փետրվարի 10-12ը, որի ընթացքում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն մարզերի և մայրաքաղաքի լրագրողների համար հատուկ սեմինար էր կազմակերպել: Եռօրյա դասընթացի ժամանակ ներկայացվեցին և քննարկվեցին «Խոսքի ազատություն եւ ատելության խոսք», «Խարան եւ խտրականություն, խոշտանգումներ», «Մարդու իրավունքների միջազգային կոնվենցիաներն ու ազգային օրենսդրությունը» թեմաները: Տեղեկատվությունը լրագրողներին մատուցվում էր ոչ թե դասախոսությունների, այլ ինտերակտիվ մեթոդով, որտեղ լրագրողներն իրենք դերակատարություն ունեին և գործնական աշխատանքների միջոցով էին բացահայտում հասարակությունում տարբեր սոցիալական խմբերի հանդեպ առկա խտրականության դրսևորումները և արձագանքում դրանց:

Սեմինարը կազմակերպվել էր «ՔՀԿ-ների և ՁԼՄ-ների հզորացում՝ հանուն Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ խտրականության վերացման» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է ILGA-Europe և COC Netherlands կազմակերպությունների կողմից:

Քննարկում ՄԻԱՎ-ին առնչվող ծրագրերը և ծառայությունները պետական ֆինանսավորմամբ իրականացնելու թեմայով

2017թ.-ի փետրվարի 10-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի գրասենյակում տեղի ունեցավ հանդիպում «Դրական մարդկանց հայկական ցանց», «ՁԻԱՀ-ի կանխարգելման միավորում», «Ներուժ Զարթոնք», «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ների և Տղամարդկանց Առողջության Եվրասիական Կոալիցիայի փորձագետ Ելենա Նեչոսինայի հետ:

Հանդիպման նպատակն էր ներկայացնել Գլոբալ Ֆոնդի ծրագրերի ավարտից հետո ՄԻԱՎ-ին առնչվող ծառայությունները պետական բյուջեից ֆինանսավորման անցնելուն վերաբերող հաշվետվության արդյունքները: Հանդիպման մասնակիցները քննարկել են պետական ֆինանսավորմանը անցնելու հարցերը՝ ըստ փաստաթղթի, որը կազմվել է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և Հայաստանի համայնքային կազմակերպությունների ազգային քննարկումների հիման վրա:

Ըստ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կարծիքի՝ խնդրի հիմնական պատճառներն են պետական բյուջեից թիրախային խմբերին և ՄԻԱՎ-ով ապրող

մարդկանց ՄԻԱՎ-ին առնչվող ծառայությունները պետական ֆինանսավորմամբ տրամադրելու հարցում հասարակական կազմակերպությունների հետ հաղորդակցության պակասը; թիրախային խմբերի, մասնավորապես ԼԳԲՏԻ, ԹՆՕ, ԿՍԿ և ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանի և խտրականության բարձր մակարդակը, նշված ոլորտներում խտրականության կանխարգելման իրավական մեխանիզմների բացակայությունը, թիրախային խմբերի և ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց՝ ՄԻԱՎ-ի հետազոտության, բուժման, խնամքի և աջակցության ծառայությունների հասանելիության խոչընդոտները:

Գլոբալ հիմնադրամի տարածաշրջանի պորտֆոլիո մենեջեր Վալերիա Գրիշեչկինան «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ գրասենյակում

2017 թվականի փետրվարի 14-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն իր գրասենյակում հյուրընկալել էր Գլոբալ Հիմնադրամի ներկայացուցիչ Վալերիա Գրիշեչկինային:

Քննարկման սկզբում ՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանը ներկայացրեց այն բոլոր ծրագրերը, որոնք այս պահին իրականացնում է կազմակերպությունը:

Այնուհետեւ «ՄԻԱՎ-ի եւ ՁԻԱՀ-ի կանխարգելումն ու տեղեկացվածության մակարդակի բարձրացումը SUS-ների եւ տրանսգենդեր անձանց շրջանում Լոռու, Շիրակի մարզերում եւ Երեւան քաղաքում» ծրագրի համակարգող Արտյոմ Մովսեսյանը ներկայացրեց 2016 թ.-ից մինչ օրս ծրագրի արդյունքները: Այնուհետև ծրագրի աութրիչ աշխատակիցները Վ. Գրիշեչկինային ներկայացրեցին իրենց առաջարկները ծրագրի հետագա արդյունավետ իրականացման համար:

Հանդիպման ընթացքում խոսվեց նաև կազմակերպության գրասենյակում ՄԻԱՎ-ի վերաբերյալ թեստավորման կարեւորության մասին, եւ աշխատակիցները հավաստիացրեցին, որ ոչ աշխատանքային ժամերի եւ օրերի ընթացքում ՄԻԱՎ- վերաբերյալ թեստավորման հնարավորություն կունենան առավել շատ SUS-ների և տրանգենդեր անձինք եւ այդ խմբերից կոմերցիոն սեռական ծառայություն տրամադրողներ:

Խոսվեց նաեւ Գլոբալ Հիմնադրամի ֆոնդերի հաշվին, Տղամարդկանց Առողջության Եվրասիական Կոալիցիայի (ECOM) կողմից ֆինանսավորվող «Առողջության Իրավունք» եւ «ՄԻԱՎ-ի եւ ՁԻԱՀ-ի կանխարգելումն ու տեղեկացվածության մակարդակի բարձրացումը SUS-ների եւ տրանսգենդեր անձանց շրջանում Լոռու, Շիրակի մարզերում եւ Երեւան քաղաքում» ծրագրերի համալրման և համատեղ արդյունավետ իրանականացման մասին: Այնուհետեւ ծրագրի աութրիչները եւ ՀԿ-ի աշխատակիցները եւ շահառուները ներկայացրեցին ՀԿ-ի հետագա գործունեությունն ու առաջխաղացումները:

2017 թվականի փետրվարի 15-17-ը Գյումրի քաղաքում ՀՀ մարզերից և Երեւան քաղաքից ժամանած քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) ներկայացուցիչների համար տեղի ունեցավ «Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և ԶԼՄ-ների հզորացում՝ հանուն հայաստանում ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ խտրականության վերացման» ծրագրի շրջանակներում «Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները առաջնագծում՝ հանուն հավասար իրավունքների» սեմինար դասընթացը: Դասընթացի առաջին օրը փորձագետ Արայիկ Զալյանը ներկայացրեց մարդու իրավունքները և ՄԻԵԴ-ը՝ մանրամասնելով մարդու իրավունքների համընդանուր հասկացությունը և պատմությունը: Քննարկվեցին տեղական օրենսդրություններ և միջազգային փաստաթղթեր, ՀՀ սահմանադրության ստեղծման պատմությունը, մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան և եվրոպական դատարանը: Այնուհետև թիմային աշխատանքի միջոցով մասնակիցները ծանոթացան դատարաններում հայցվոր և պատասխանող կողմերի գրավոր դիմում կազմելու ճիշտ ձևերին: Երկրորդ օրը սկսվեց նախորդ օրվա ամփոփումով. մասնակիցները շատ ոգևորված էին դասընթացի արդիական թեմաներից: Փորձագետ Ա. Զալյանը ներկայացրեց խտրականության տեսակները, խտրականության արգելքով պաշտպանված հիմքերը և նրանց որոշակի հատկանիշները: Այնուհետև կատարվեց տեսանյութի դիտում, որը ուղղված էր խտրականությանը:

Երրորդ օրվա դասընթացի փորձագետն էր Անահիտ Սիմոնյանը, ով մասնակիցների հետ ծանոթացավ և ներկայացրեց, թե ինչ է խտրականությունն իբրև իրավական խնդիր, խոսեց խտրականության վերաբերյալ միջազգային և ներպետական փաստաթղթերի մասին: Մասնակիցները շատ ոգեվորված վերհիշեցին նախորդ օրվա ձեռք բերած գիտելիքները և շարունակեցին դրանք ավելի կիրառելի դարձնել խմբային աշխատանքների ժամանակ: Ա.Սիմոնյանը նաև ներկայացրեց, թէ ինչու է մեզ անհարժեշտ «Խտրականության դեմ

պայքարի մասին» օրենքի ընդունումը, որից հետո ներկայացրեց մի քանի իրավական փաստարկներ: Եռօրյա սեմինարի ավարտից հետո մասնակիցների մոտ այն միասնական համոզմունքն էր ձևավորվել, որ մեր հասարակության յուրաքանչյուր անդամ պետք է խտրականությունից պաշտպանվելու իրավական մեխանզիմներ ունենա: Նաև քննարկվեցին ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ խտրականության դեպքերը, ցուցադրվեց թեմայի վերաբերյալ տեսանյութ, որին հաջորդեց քննարկում:

Դասընթացը իրականացվեց «Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և ԶԼՄ-ների հզորացում՝ հանուն հայաստանում ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ խտրականության վերացման» ծրագրի շրջանակներում որն իրականացնում էր«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն:

SUS-ների և ՏՐԱՆՍ* անձանց կարիքների գնահատում

2017թ. փետրվարի 19-ին և 21-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի գրասենյակում տեղի ունեցան ԳԲՏՔ և SUS-ների հետ հանդիպում:

Հանդիպման նպատակն էր քննարկել համայնքի մոբիլիզացմանն ուղղված կազմակերպության գործունեությունը և ռեսուրս բաժնի աշխատանքները:

Կատարվեց մասնակից ԳԲՏՔ և SUS անձանց կարիքների գնահատում՝ շեշտադրելով առկա խնդիրները, ներկայացվեցին ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելմանն ուղղված նոր առաջարկներ, ինչպես նաև քննարկվեցին նոր գաղափարներ, որոնք կարող են իրականացվել կազմակերպության կողմից տրամադրվող փոքր դրամաշնորհների միջոցով:

Երկու օրերի ընթացքում հանդիպումներին մասնակցել է թվով 50 SUS և տրանս* անձ:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ում այսուհետ կգործի ռեսուրս կենտրոն, որտեղ այցելուները կարող են մասնակցել տարբեր հանդիպումների, քննարկումների, ակումբների, դասընթացների և այլ միջոցառումների:

Ռեսուրս կենտրոնի ակտիվ մասնակից դառնալու, ինչպես նաև կենտրոնի կողմից իրականացվող միջոցառումներին մանրամասն կերպով ծանոթանալու համար կարող եք լրացնել հայտը:

Սիրով սպասում ենք Ձեզ մեր գրասենյակում:

Հաղթահարենք ՄԻԱՎ-ի նկատմամբ վախերը միասին թեմայով հանդիպում

2017թ. փետրվարի 22-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի գրասենյակում տեղի ունեցավ «Հաղթահարենք ՄԻԱՎ-ի նկատմամբ վախերը միասին» թեմայով հանդիպումը:

ՄԻԱՎ-ի թեման մենահատուկ է այնքանով, որ այն հուզականորեն հագեցած է տարատեսակ նախապաշարմունքներով և ձևավորված միֆերով, որոնք ձևավորվում և տարածվում են հասարակության և ԶԼՄ-ների միջոցով: Հանդիպման նպատակն եր կոտրել այն կարծրատիպերը, որոնք մեր հասարակության մեջ հաճախ վախ է սերմանվում ՄԻԱՎ-ի և ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց հանդեպ, որը հանգեցնում է մեկուսացման:

Հանդիպմանը ներկա էին մարդիկ, ովքեր կիսվեցին իրենց մտքերով և փորձով: Ինտերակտիվ խաղի միջոցով մասնակիցները այրեցին թղթի վրա իրենց գրառմամբ այն վախերը, որոնք կապված են ՄԻԱՎ-ի հետ, իսկ աշխարհը առավել բարեկեցիկ և ներառական դարձնելու

ցանկություններն ու պատրաստակամությունը փաթեթավորվեցին գեղեցիկ մի արկղում՝ պատված ՁԻԱՀ-ի խորհրդանիշ հանդիսացող կարմիր ժապավենով: Արկղիկը կբացվի և դրա պարունակությունը կընթերցվի 2017թ.-ի փետրվարի 28-ին կայանալիք համերաշխության ընթրիքի ժամանակ (մանրամասները ԱՅՍՏԵՂ)

Հանդիպումը ֆասիլիտացնող Էլվիրա Մելիքսեթյանը ասում է.

«Ես կարևորում եմ նմանատիպ ոչ ֆորմալ հանդիպում-քննարկումները, քանի որ հավատում եմ, որ դրանք գիտելիքի, փորձառության փոխանակման լավագույն տարբերակներից են: Շատ ողջունելի էր նկատելը հանդիպանը այդքան մարդկանց ներկա լինելը. դա նշանակում է, որ քննարկման թեման արդիական է, ինչը, բնականաբար, էլ ավելի է մոտիվացնում կազմակերպիչներին նմանատիպ հարթակներ ստեղծելուն: Ինձ համար շատ կարևոր էր հարթակը հիմնականում մասնակիցներին տրամադրելը, իսկ նրանց ակտիվությանը հետևելը՝ շատ ոգևորիչ: Հատկանշական է, որ որքան էլ խոսում ենք ՄԻԱՎ-ի մասին, բարձրաձայնում ենք միֆերը դրա շուրջ, բացահայտում վերջիններիս ձևավորման պատճառականությունը, այնուամենայնիվ, ՄԻԱՎ-ի նկատմամբ չարդարացված վախը հասարակության կողմից պահպանվում է կամ մասամբ է նվազում: Ես կարծում եմ, որ անհրաժեշտ է պարբերաբար կազմակերպել նմանատիպ հանդիպումներ՝ քննարկելու տարատեսակ հարցեր կապված երևույթի հոգեբանական ասպեկտի հետ, քանի որ, թերևս սա այն ոլորտն է, որը համապարփակ ուշադրության չի արժանանում: Դեռ շատ անելիք ունենք ոլորտում՝ հոգեկան առողջության պահպանման և դրա վերականգնման տեսանկյունից, բայց իհարկե այս ամենը ժամանակ և համապատասխան ռեսուրսներ տրամադրելու կարիք ունի»:

Համերաշխության ընթրիքը «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի գրասենյակում

2017թ.-ի փետրվարի 28-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի գրասենյակում տեղի ունեցավ «Համերաշխության ընթրիք»-ը ԼԳԲԻՔ անձանց համար: Ինչպես անհատական, այնպես էլ համայնքային բարեկեցության կարևոր գործոններից մեկը համերաշխության զգացողության առկայությունն է: Առօրյա հոգսերի և ծանրաբեռնվածության պատճառով մենք հաճախ անտեսում ենք մեր հարաբերությունները ինքներս մեզ, այլ մարդկանց և աշխարհի հետ: Նման մթնոլորտը երբեմն հագենում է կոնֆլիկտածին իրավիճակներով, և մենք միմյանց փոխադարձաբար ընդունելու և հասկանալու փոխարեն էլ ավելի ենք սրում իրավիճակը: Համերաշխության ընթրիքը նպատակ ուներ մի հարկի տակ հավաքելու ԼԳԲՏՔ + մարդկանց և փորձելու դրական

միջավայրի ու համեղ ընթրիքի ներքո արթնացնելու համերաշխության մթնոլորտը մեր ներսում և մեր միջև: Ընթրիքի ընթացքում ստեղծվեց հաճելի և ջերմ երեկո, որտեղ յուրաքանչյուրը կարողացավ կիսել իր մտքերը, նույնիսկ այն պատմությունները, որոնց մասին երբևիցե չէր խոսել կամ կիսվել: Հյուրերը կիսվեցին իրենց մտքերով՝ թե ինչ է իրենց համար համերաշխությունը կամ կարևորում ենք արդյոք այն մեր կյանքում կամ համայնքում: Իսկ վերջում բացվեց շատ սպասված այն արկղիկը, որը «Հաղթահարենք ՄԻԱՎ-ի նկատմամբ վախերը միասին» թեմայով դասընթացի ժամանակ մասնակիցների գրի առած ցանկություններն ու պատրաստակամությունն էին աշխարհը առավել բարեկեցիկ և ներառական դարձնելու համար:

-Հանդիպման ֆասիլիտատորի առավելություններից մեկն այն է, որ խումբը մշտապես ուշադրությանդ կենտրոնում է և կարողանում ես հաղորդակից լինել սենյակում տեղի ունեցող ամեն բանի. այս հանդիպումը շատ արգասաբեր էր այդ տեսանկյունից: Անձամբ ինձ համար այն ոգևորիչ էր. հետաքրքիր էր լսելը մարդկանց կարծիքները համերաշխության շուրջ, որոնք նաև ուսուցողական էին, իրենց անձնական պատմություններին հաղորդակից լինելը՝ շատ արժեքավոր: Հաճելի էր մերթընդմերթ նկատել, որ սենյակը ողողվում է ապրումակցման շնչով: Ես հավատացած եմ, որ ժամանակ առ ժամանակ նմանատիպ հանդիպումները անհրաժեշտ են, որովհետև անմիջական և բարյացկամ միջավայրը նպաստում է ներքին կաշկանդվածության աստիճանական թուլանալուն, ինչու չէ՝ նաև մտերմանալուն և համերաշխության մթնոլորտ ձևավորելուն: Հատկանշական էր նաև, որ ներկա էին մարդիկ, ովքեր առաջին անգամ էին հյուրընկալել կազմակերպություն, կարծում եմ՝ նմանատիպ նախաձեռնություններով մենք նպաստում ենք համայնքի ավելի միասնական լինելուն և առողջ հարաբերությունների ձևավորմանը:

«Համերաշխության ընթրիքի» ֆասիլիտատոր հոգեբան Էլվիրա Մելիքսետյան

ՌԵՍՈՒՐՍ ԿԵՆՏՐՈՆ

2017

Մարտ

Երկուշաբթի	Երեքշաբթի	Չորեքշաբթի
		Մարտի 1
		Անգլերեն և տուրիզմ
		18:00 - 19:30
Մարտի 6	Մարտի 7	Մարտի 8
Անգլերեն և տուրիզմ	Ֆիլմի դիտում և քննարկում	Անգլերեն և տուրիզմ
18:00 - 19:30	18:00 - 20:00	18:00 - 19:30
Մարտի 13	Մարրի 14	Մարտի 15
Անգլերեն և տուրիզմ	Erasmus+	Անգլերեն և տուրիզմ
18:00 - 19:30	18:00	18:00 - 19:30
Մարտի 20	Մարտի 21	Մարտի 22
Անգլերեն և տուրիզմ	Մարդու իրավունքների ակումբ	Անգլերեն և տուրիզմ
18:00 - 19:30	17:30	18:00 - 19:30
Մարտի 27	Մարտի 28	Մարտի 29
Անգլերեն և տուրիզմ	Համակարգչային դասընթացներ	Անգլերեն և տուրիզմ
18:00 - 19:30	18:00	18:00 - 19:30

Հինգշաբթի	Ուրբաթ	Շաբաթ
Մարտի 2	Մարտի 3	Մարտի 4
Առաջնորդություն	Մեռականություն և տրանսգենդերություն	Ինչպես արձագանքել ատելության խոսքին օնլայն տիրույթում
18:00 - 20:00	18:00 - 20:00	18:00 - 20:00
Մարտի 9	Մարտի 10	Մարտի 11
	Անգլերեն և տուրիզմ	
	18:00 - 19:30	
Մարտի 16	Մարտի 17	Մարտի 18
	Անգլերեն և տուրիզմ	ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելման սեմինար
	18:00 - 19:30	18:00 - 20:00
Մարտի 23	Մարտի 24	Մարտի 25
	Անգլերեն և տուրիզմ	Erasmus +
	18:00 - 19:30	18:00 - 20:00
Մարտի 30	Մարտի 31	
	Անգլերեն և տուրիզմ	
	18:00 - 19:30	

Այսուհետ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի գրասենյակում կգործի ռեսուրս կենտրոն, որտեղ յուրաքանչյուր ոք կարող է կիսել իր փորձն ու գիտելիքները և բերել նոր հմտություններ:

Ամեն շաբաթ գրասենյակում տեղի կունենան հանդիպումներ, դասընթացներ՝ տարբեր թեմաներով:

Յուրաքանչյուրս կարող ենք ունենալ մեր ներդրումը հասարակության զարգացման գործում: Թեմաները, առաջարկները բաց են լրացումների և փոփոխությունների համար:

Եթե կարծում ես, որ հենց դու կարող ես կիսել քո հմտությունները կամ ձեռք բերել, ապա՝ դիմի՛ր՝ լրացնելով հայտադիմումը http://ngngo.net կայք էջում:

Եթե փնտրում եք անվճար տարածք սեփական նախաձեռնությունները իրականացնելու համար, ապա խնդրում ենք զանգահարել +374(0)60478989 ամրագրման համար:

ՄԵՆՔ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐՈՒՄ

NEW GENERATION HUMANITARIAN NGO

@NGNGO

@NGNGO.ARMENIA

ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ #23